

Այսպէս, ժՁ. դարուն, մասմետականներ՝ հապէշ տէրութիւնը և քրիստոնէութիւնը ջնջել աշխատած էին, իսկ Հապէշները՝ Փորթուգալի օգնութեամբ՝ յաջողած էին փրկել իրենց երկիրը և կրօնը։ Ասոր համար Փորթուգալցիք բնակութիւն հաստատելու և առեւտուր ընելու ազատութիւն ստացան Հապէշիստանի մէջ։

Այս արտօնութիւնը ժխտական արդիւնքներու առաջնորդեց երկիրը, վասնզի իրենց տրուած արտօնութենէն օգտուելով՝ Յիսուսեան վարդապետներ Հապէշիստան գացին և կաթողիկոսութիւն քարոզեցին, պատճառ դառնալով պառակտումի։

Այս քարոզիչներէն կը յիշատակուին չորս եկեղեցականներ, Մելքոն, Սիլվոս (հաւանօրէն Սեղբոս), Պետրոս և Պայիզ (Բարսեղ ?) (1), որոնք մեծ եռանդ ցոյց տուած են 1577—1 03ին կաթողիկոսութիւնը տարածելու համար եթովպիոյ մէջ (Յ. Նալբանդեան, Արեւ, 19 փետր. 1935)։

Այս չորս Յիսուսեաններուն համար ըսուած է, թէ Հայեր են, սակայն հաւանական չէ։

Ասոնցմէ վերջինը՝ Հ. Պետրոս Պայիզ մասնաւորապէս կաթողիկ առաքելութեանց պատմութեան մէջ անուն թողած է, որովհետեւ յաջողած է 1604ին թագաւորը և արքունիքը կաթողիկ դարձնել։ Նե-

(1) Հ. Ղեւոնդ Ալիբեկ («Սիսական», էջ 471) այս չորս Յիսուսեաններու անունները իրարու միացնելով երկու անձի վերածած է, Մելիոն Սիլվոս եւ Պետրոս Պայիզ (Pays), հաւաստելով թէ անոնք Հայեր էին։

Պ. Յ. Նալբանդեան 7 Յունիս 1945 քուակիր նամակով մը իմ հարցումիս պատասխանելով կը հաւաստէ, թէ ինքն այդ տեղեկութիւնը բաղած է E. L. Butcherի The Story of the Church of Egypt գիրքէն։